

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

336.2

Մ-67

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ

ԴՐԱԳԱՐԱՆ

ՄԻ ԹՈՂՆԵՔ  
ՎՈՐ ՀԱՐՎԱԴԱՐՏՔ  
ԳՈՅԱՆԱ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ա.Ա.Ֆ.Խ.Զ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆԻ


ԹԻՖԼԻՍ — 1926 թ.

336.2

5-69

15 JAN 2010 10:05 AM

336.2/6



Յարական կառավարության, մենչեվիկների,  
դաշնակների յել մուսավարիսների ժառան-  
գությունը

Այժմ վհչ վոքի համար գալտնիք չե, թե բանվորա-  
գյուղացիական կառավարությունը իր գոյության առա-  
ջին օրերից կանգնել եր այսպիսի գժվարությունների,  
այնպիսի արգելքների և վտանգների առաջ, վոր վհչ  
միայն բուրժուազիան, այլ և բանվորներից ու գյու-  
ղացիներից շատերը չեյին հավատում Խորհրդային իշ-  
խանության վերջնական հաղթանակին:

Յարական կառավարությունից, իսկ Անդրկովկա-  
սում նաև մենշևիկներից, գանձակներից ու մուսավա-  
թիստներից Խորհրդային պետությունը ժառանգություն  
ստացավ մի տնտեսություն, վորը քայլայվել, ավեր-  
վել եր իմպերիալիստական (նվաճողական) պատերազ-  
մի պատճառով, Հայաստանի ու Վրաստանի միջև ծա-  
գած պատերազմի հետևանքով, անգլիական տիրապե-  
տությամբ և դեմոկրատիկ Անդրկովկասի այլ «հրաշա-  
լիքներով»:

Խորհրդային միության ամեն մի բանվոր, ամեն մի  
գյուղացի շատ լավ գիտե, թե իմպերիալիստական  
պատերազմի ժամանակ ցարական մինիստրները, բուր-  
ժուազիան և կալվածատերերը վորքան հարստություն  
ու արժեքներ (արժեքավոր իրեր) ուղարկեցին արտա-  
սահմանյան բանկերը, նախազգալով ցարական իրավա-

կարգի մոտալուս անկումը: Տասնյակ միլիոնների ժողովրդական արժեքներ տարավ իր հետ՝ արտասահման փախած՝ վրաստանի մենչեթից առավարությունը. դրանից ավելի պակաս հարստություն չտարան իրենց հետ և չյուրացրին՝ Հայաստանի գաշնակցական ու Ադրբեջանի մուսավաթիստ կառավարությունները:

Իսկ զորքան գյուղեր ու քաղաքներ են վոճաչացել և յերկրի յերեսից ջնջվել աղքային այն թշնամնաքի, աղքային այն պատերազմների ու կոտորածների պատճառով, վորի սերմերն այստեղ՝ Անդրկովկասում ցանեցին մուսավաթիստները, գաշնակները և մենշեթիները:

Այս բոլոր կառավարությունները ժողովրդի գրպանից քամել, հանել են հարյուրավոր ու հազարավոր միլիոն ոռոգիների վոսկի այն պատերազմների համար, վորոնք մզգում եյին վճռ թե աշխատավորների ոգտին, վճռ թե բանվորների և զյուղացիության շահերի համար, այլ գործարանատերերի ու կալվածատերերի անկուշա պահության պատճառով: Թե ցարական կառավարությունը, թե Անդրկովկասի այսպես կոչված «գեղմոկրատիկ» կառավարությունը հսկայական գումարներ եյին կորզում, հանում բանվորության ու աշխատավոր զյուղացիության միջից, և դրանց մի մասը լեցնում եյին իրենց գրանները, իսկ ավելի խոշոր մասը լիցնում եյին արտասահմանյան կապիտալիստների գըրպանները և գործազրում եյին պատերազմական նպատակների համար: Այս բոլորի հետևանքը լինում եր այն, վոր հիշյալ կառավարություններն անհամեմատ ավելի ծախսեր եյին ունենում, քան յեկամուտ ունեցին: Վորպեսզի իրենց այդ ծախսերը ծածկեն, նրանք ստիպված եյին լինել դիմել տպագրական մամուլի

ոգնությանը, վոր թղթադրամ եր տպում: Վորքան ավելի եյին աճում պետական ծախսերը, այնքան ավելի շատ եյին տպում թղթադրամներ, այնքան ավելի ու ավելի ընկնում, եր նրանց արժեքը:

Ահա թե վորպիսի, ժառանգություն սուացալ Խորհրդային իշխանությունը ցարական Ռուսաստանի գեղմոկրատիկ Անդրկովկասի նախկին կառավարություններից, ավելրված ֆարբիկաներ ու գործարաններ, խանգարված փոխադրության միջոցներ (տրանսպորտ), քարուքանդ գյուղեր և քաղաքներ, վչացած գյուղական տնտեսություն, պետական գատարկ գանձարկներ և անարժեք ու որ ավոր ընկնող թղթե ոռւրի:

### Խորհրդային պետուրյան առաջին տարիները

Բանվոր գասակարգը և զյուղացիությունն ստիպված եյին հանց առաջին որերից իրենց կրծքով պաշտպան ել Խորհրդային իշխանությունը՝ ամեն կողմից արշավող թշնամիներից: Ավելի, քան յերեք տարի, առանց ընդունիչումի ու հանգստի, Բանվորա-Գյուղացիական կառավարությունը իր խանգարված տրանսպորտով, ավելրված գործարաններով, անընդհատ կավում եր իր գոյության համար, նեղված ցրտից ու սովից, և քսանմեկ թվին միայն, ուղղմանականներում հաղթելով, վերջ տալով թշնամիներին, նա կարողացավ սկսել, ձեռք զարկել խաղաղ անտեսական շինարարությանը: Պատերազմի հիշյալ տարիներն ավելի ևս ձգեցին մեր ոռւրլու արժեքը: Հինգ միլիոնանոց բանակն ու սովոր քաղաքները պահելու, պատերազմական կարիքները հոգալու, տարափոխիկ հիվանդությունների դեմ կովելու



հետ կապված հսկայական ծախսերը, վորկլում եր մեր պետությունը, ստիպված եյինք լինում ծածկել թղթագրամներ տպելով՝ այսինքն՝ ևմիսիայով:

### Եմիսիան – ամենածանր հարկն է

Թղթադրամներ տպելն ու շրջանառության դնելը (եմիսիան) – ամենածանր հարկն է։ Այդ հարկը այնքան ծանր ու մեծ է, վոր վհչ մի բանվոր չի կարող հաշվել, թե դա նրան ինչ ենստել։ Վաղուց չե, վոր Հայաստանում, Վրաստանում ու Աղբյուջանում դրվել եյին թղթադրամներ տպելու մամունիներ, վորոնք դրամի հեղեղ եյին բաց թողնում։ Որ ավուր, ժամ առ ժամ ընկնում ե թղթե ոռորլու գինը։ Ասենք, որինակ, գանձարանից բաց են թողնում մի ոռորլի. մինչև այդ ոռորլին կը հասնի գավառական քաղաք, կամ ել ավելի հեռու տեղ՝ մի ինչ վոր խուլ անկյուն, նա կիսով չափ, իսկ հաճախ՝ կեսից ել ավելի, կորցնում ե իր արժեքը։ Դյուզացին իր հացահատիկը, խաղողը կամ բուրգը ծախում ե մի ոռորլով, իսկ մինչև այդ ոռորլին կը բերի քաղաք, վորպեսզի գնի իր անտեսության համար անհրաժեշտ այս ու այն բանը, այդ ոռորլին արդեն հիսուն կոտեկ ել չարժե։ Նույն բանն եր կատարվում նաև բանվորների ու պաշտոնյաների հետ։ Նրանց ստացած ոռօճկը որ ավուր, ավելի ու ավելի կորցնում եր իր գինը, դրամի արժեքն ընկնելու պատճառով, և այն բանը, վորի համար նրանք յերեկ գնարում եյին հարյուր, այսոր վճարում են արդեն յերկու հարյուր ոռորլի, իսկ ամսի վերջին նրանց ամրող ոռօճկը մի կոտեկ ել չարժե։ Այդ բանը իր կաշու վրա

փորձել ե Հայաստանի, Վրաստանի ու Աղբյուջանի յուրաքանչյուր բանվոր և գյուղացի։ Բայց չափազանց մեծ քանակությամբ թղթադրամներ բաց թողնելը փասում եր վոչ միայն աշխատավորներին, այլ և թունավորում եր ժողովրդական ամբողջ տնտեսությունը և հնարավորություն չեր տալիս կարգի ձգելու այն։ Տուժում եր արդյունաբերությունը, առուժում եր գյուղական տնտեսությունը, տուժում եր պետական ամբողջ մեքենան (մեխանիզմը), վորովհետև դժվար և հաշիվ կազմել՝ հիմնվելով անկայուն դրամների վրա։ Վհչ մի գործարան, վոչ մի պետական տրեստ կամ կոռպերատիվ չգիտեր, թե քանի գնահատի իր ապրանքները և ինչ գնով ծախի դրանք։ Այն բանը, վոր այսոր ծախում ես զու մի ոռորլով, վաղը նույն բանը առնում ես յերկուսով։ Այդ պատճառով ահա, ձիշտ կը լինի հմիսիան նույնական անվանել հարկ, այն ել այնպիսի հարկ, վորն իր ամրող ծանրությամբ ընկնում ե աշխատավորության վրա և քայլայում ե ամբողջ պետական ու ժողովրդական տնտեսությունը։

Ինչի՞ համար են զանձվում հարկերը Խորհրդային պետության մեջ

Ամեն մի պետություն ունի խոշոր պարտականություններ, վորոնք պահանջում են խոշոր ծախսեր։ Բուժժուական պետությունը, այսինքն՝ այն պետությունը, վորտեղ իշխանության գլուխը կանգնել են կալվածատերերն ու բուժժուազիան, հիմնում ե իր իշխանությունն այնպես, վորպեսզի ամենահեշտ և ամենից լավ ձեռվ կարողանա լցնել։ Հարստացնել իր զր-

պանը՝ աշխատավորների հաշվին։ Բուրժուական պետությունը պահում եր վստիկանություն և ժանդարմաներ, վորոնց ողնությամբ նա խեղբում եր բանվոր դասակարգն ու գյուղացիությունը, շինում եր համալսարաններ, վորտեղ սովորում եյին գործարանատերերի ու կալվածատերերի զավակները, հիմնում եր ապարանքներ (պալատներ) և կուրօրաններ (բժշկելու ամարանոցներ), վորտեղ քեֆով ապրում ու հանգստանում եյին բուրժուազիայի ընտանիքները, և այդ ամենը գործարանային բանվորներին ու աշխատավոր գյուղացիությունը կողոպտելու միջոցով։ Չնչին աշխատավարձ, անվերջ հարկեր ու ապորինի տուրքեր, անիրավունակություն (իրավունքից զարկ լինելը) — ահա աշխատավոր մարդու վիճակը բուրժուական պետության մեջ։ Հարկերի ամրողջ ծանրությունը, ամրողջ բեռլ ընկած եր գյուղացինների ու բանվորների վրա, իսկ ամրողջ հարստությունը, կյանքի բոլոր բարիքները վայելում եր բուրժուազիան։

Բոլորովին ուրիշ բան և Խորհրդային պետության մեջ, ճիշտ ե, Խորհրդային պետությանն ել միջոցներ են պետք, Խորհրդային պետությանն ել յեկամուտներ են հարկավոր, բայց միանգամայն այլ՝ հակառակ նպատակների համար։ Մենք արդեն ասացինք, թե փորբան ջանք թափեց բանվորա-գյուղացիական իշխանությունը, վորպեսզի հետ մղի պրոլետարական պետության թշնամինների հարձակումը։ Բայց քաղաքացիական պատերազմի այդ տարիններն արդեն անցել են. այժմ մեր իշխանությունն ամրողջապես զբաղված է մեր յերկրի տնտեսությունն ու արդյունաբերությունը վերականգնելու հոգսով։ Անզրկովկասի յուրաքանչյուր բանվոր,

յուրաքանչյուր գյուղացի զիտե այն մեծ շինարարության մասին, վարով զբաղված է մեր պետությունը։ Հերիք և մատնանշել ներկայումս կասուցվող (շինվող) Զեմո-Ավճական ջրա-ելեկտրո-կայանը և Ողուրգեթի յերկաթուղին վրաստանում, Բագու-Զուլֆայի յերկաթուղին Աղրբեջանում, նորերս բացած Շիրակի ջրանցքը Հայաստանում ու առնոտարակ վոսողներ (ջրհելու) կարգը վերականգնելու աշխատանքները և ուրիշ շատ ու շատ նման ձեռնարկություններ, վորպեսզի հասկանալի զառնա, թե խորհրդային իշխանությանը ինչի համար են պետք խոշոր միջոցներ։

Հոկայական միջոցներ են հարկավոր՝ վերականգնելու վյուղական տնտեսությունը, զարգացնելու ծխախոտագործությունը, զինեզործությունը, շինելու նոր տրաքտոր ու գյուղատնեսական գործիքներ և այն։ Չի կարելի մոռացության տալ մեր պետության կուլտուրական ու քաղաքական աշխատանքը. բանվորների ու գյուղացիության յերեխանների և պատանինների համար հարմարեցրած հազարավոր գալոցները, բանվորա-գյուղացիական համալսարանները, ակումբները (կլուբները) խրճիթ-ընթերցարանները, պետական ապարատի պահելլ, հիմնադանոցները, սոցիալական ապահովությունը, վորոնք բոլորը միասին առաջ՝ պահանջում են հոկայական միջոցներ ու ծախսեր։

Յեկ վերջապես, պակաս ծախսեր չի պահանջում նաև կարմիր բանակը — Խորհրդային պետության պաշտպանը, վարի մասին այժմ ել վհչ մի բոպե մենք չպիտի մոռանանք, վորովհետեւ համաշխարացին բուրժուազիան վհչ մի վարկայն չի գաղաքում յերազելու այն մասին, վորպեսզի վոչնչացնի պրոլետարական իշխանությունը։

Այսպես ուրեմն, յուրաքանչյուր պետություն, իր դրամականը պահպանելու համար, կարիք ունի յեկամուտների:

Մեր պետությունը վճրտեղից պիտի վերցնի այդ հսկայական միջոցները:

Պարզ ու հասկանալի յե, վոր այդ միջոցները պետք ե տա Խորհրդային Միության ազգաբանակությունը հենց: Ահա թե հարկերը ինչ բանի համար են հարկավոր մեր պետության:

### Հարկերն ի՞նչպես ստեղծեցին կայուն ռուբլի

Այժմ տեսնենք, թե ինչպես Խորհրդային կառավարությունը մտցրեց գրամական բարենորոգումը, վորապես աշխատավորներին աղատի ընկնող թղթե ռուրլու ծանր բեռից, վորապես հաստատուն հող սուեզի մեր արդյունարերությունը, մեր տնտեսությունն առողջացնելու համար. այդ նպատակով ահա, նա ամենածանր հարկը — եմիսիան փոխարինեց սովորական և չնշին հարկերով:

Խորհրդային իշխանությունը, հաղթական վերջացնելով քաղաքացիական պատերազմը, ձեռք դարկեց մի դժվար խնդրի. իր անտեսությունը կարգի բերել այնպես, վորապես առաջին բանվորա-գյուղացիական հանրապետությունը շրջապատող կապիտալիզմը չժողով նրան: Դրա համար կար միայն մի ճանապարհ. անցնելով խոշոր արդյունարերության, տրամադրութիւն և ֆինանսների գլուխը, այդտեղից հարվածել ծեծել բուժուազիային հենց նրա զենքով, այսինքն՝ ստիպել վորենեսպի կապիտալն աշխատել աշխատավորների պետության

ոգտին, վորապես կանչի և գործի դնի յերկրի արտադրական այն բոլոր ուժերը, վոր պետությունն ինքը անկարող եր այն ժամանակներում համալսմբել:

Հասկանալի յե, վոր յերկրի մեջ գոյություն ունեցող մասնավոր կապիտալի և ազատ առևտի չնորհիվ, պետական ամբողջ տնտեսությունն ել դրվեց գրամական շրջանառության վրա: Դրամական տնտեսության հարցերը դարձան կենսական և կարեւոր:

Այսպես մկնեց մեր գրամական տնտեսության վերականգնումը: Հետզհետե կրծատվում եր մեր գրամական միջոցների անվերջ փոփոխումը. հետզհետե սկսեց կազմվել հաստատուն տնտեսական ծրագիր, սկսեցին կրծատվել հիմնարկների ուռուցիկ հաստիքները (շտատները), փակվում կամ անցնում եյին տնտեսական հաշվի նախկին վասարեր ձեռնարկները, պետական բյուջեից (պետական յեկամուտների ու ծախսերի ծրագրից) հանվում եյին բազմաթիվ ծախսեր ու յեկամուտներ և տրվում եյին տեղերին (տեղական բյաւջեյին): Մի խոսքով, ձիշտ ե՛ դժվարությամբ, բայց ամեն կերպ կրծատվում եյին պետական յեկամուտները, և մենք հետզհետե վարժվեցինք ապրել մեր միջոցների համեմատ ու հարմարվել մեր գրապանին:

Դրա հետ միաժամանակ պետք եր լինում մտածել նաև այն մասին, թե ինչպես լցնենք մեր պետական այդ գրապանը, ինչպես ավելացնենք մեր յեկամուտները: Արդյունաքեր տնտեսությունը հանդիսանում է առողջ ֆինանսների, առողջ դրամի հիմքը:

Ամենից առաջ պետք եր մտածել այն մասին, վորապես մեր ռուբլին այլ ևս չընկներ, չկորցներ իր արժեքը, կամ, պետական լեզվով տած, մեր սուբլին

պետք եր ստարիլիզացիայի յենթարկել, այսինքն՝ անհրաժեշտ եր կայուն դարձնել այն:

Այդ բանին կարելի յե համեմ, գլխավորապես, յերկու միջոցով. մի կողմից՝ կրծատելով թղթադրամ տպող մամուլի աշխատանքը, մյուս կողմից՝ պետական գանձարան վերադարձնելով այն թղթադրամները, վորոնք արդեն բաց ելին թողնված:

Պետական ծախսերը կրծատելու, արդյունաբերության արտադրության ինքնարժեքը իջեցնելու յեվ պետական փոխառությունների շնորհիվ — հաջողվեց կրծատել թղթադրամ տպելը, իսկ հարկերի շնորհիվ — հաջողվեց գանձարան վերադարձնել շրջանառության համար բաց թողած դրամի մի մասը:

Այդ հանգամանքը հնարավորություն տվեց վերջապես քայլ առ քայլ անցնել՝ հաստատուն, կայուն դրամ բաց թողնելուն. Մկրտում յերեան յեկավ չերվնեցը, վորն ապահոված եր վոսկով ու արժեթղթերով, ապա հանդես յեկան արծաթե դրամները և գանձարանային տոմսերը (մեկը, յերեք և չինգ ուուրլիանոց թղթադրամները), վորոնք ազատ կարող են փոխարինվել չերվնցով ու հնչուն դրամանիշներով:

Այնպես վոր ներկայումս մեր ունեցած կայուն դրամը, զգալի չափով, ծեռք ե քերված շնորհիվ հարկերի:

Բայց այդ կայուն դրամներն ել կարող են կորցնել իրենց գինն ու արժեքը, յեթե նրանք բաց կը թողնվեն անթիվ քանակությամբ: Նրանք արժեք ունեն այն ժամանակ միայն, յերբ բաց են թողնվում վորոշ չափով և բավարար կերպով ապահոված են: Իսկ վորպեսզի դրամնք անտարժեք չդառնան, պետք է ողնության հաս-

նեն դաշտյալ հարկերը: Վորքան ավելի շատ դրամ կը վերադառնա գանձարան հարկերի միջոցով, այնքան ավելի պակաս քանակությամբ կարելի յե բաց թողնել նոր դրամները: Գանձարան վերադարձած դրամները նորից կարող են շրջանառության թողնվել:

Հարկ վիճակը — յուրաքանչյուր բաղաքացու պարտականությունն է

Հարկերը պետական մյուս յեկամուտներից տարբերվում են նրանով, վոր կրտմ են, այսպես ասած, ստիպողական բնույթ, այսինքն՝ ազգաբնակությունը հարկեր մտցնում ե վիչ թե կամովին — ինքնարերաբար, այլ յենթարկվելով պետական իշխանության կարգադրություններին: Իսկ պետական իշխանությունը հարկը մտցնում ե վիչ թե իր բավականության համար, այլ հոգալու պետական այս կամ այն կարիքը: Այսպես որինակ, Անգլիայում հարկերը կազմում են պետական յեկամուտների համարյա միակ ազգյուրը:

Վոր հարկը չի կարող դուրեկան լինել հարկատուին, դա հասկանալի յե ինքն ըստ ինքյան: Բայց հարկը չի կարելի համարել չարիք, ինչպես և չի կարելի համարել այն բարիք: Հարկը — վո՞չ այդ ե, վո՞չ ել այն: Հարկը ուղղակի ահրաժեշտություն ե, վորովհետեւ պետությանը դրամ՝ ե պետք՝ պետական իր ծախսերը ծածկելու համար: Իսկ դրամ ե պետք մասնավանդ մեր Խորհրդային պետությանը, վորը պիտի վերականգնի ցարից ժառանգություն ստացած ժողովրդական քայլայլած տնտեսությունը և հոգա ազգաբնակության կարիքները:

Խորհրդային Միության կյանքում հարկերը հանդիսանում են իրենվ տնտեսության հիմք: Խորհրդային իշխանությունը պարզ ու վորոշ ասում ե, թէ ինչի համար և ինչ նպատակով և նա հարկեր սահմանում:

Նպատակը մի ե---յերկիրը դուրս բերել, ազատել քայլայված տնտեսությունից:

Բայց գժբախտաբար, ստիպված ենք նկատել, վորշատ քաղաքացիներ անուշադիր և անազնիվ վերաբերմունք են ցույց տալիս դեպի հարկերը: Մեր խոսքը վերաբերվում ե թե քաղաքին, և թե գյուղին: Շատ քաղաքացիներ վհչ մի կերպ չեն կարողանում հրաժարվել ցարական ժամանակի իրենց սովորույթներից ու հայցքներից:

Ցարական ժամանակի հարկերը յեվ այժմյան հարկերը նույնը չեն:

Թեև այժմյան հարկերը թեթև չեն, բայց նրանք այնուամենայնիվ ավելի քիչ են, քան ցարական իշխանության ժամանակ յեղած հարկերը: Սրանք ավելի ծանր են յերեսում ներկայումս այն պատճառով, վորպատերազմի ու դրա հետ կապված ավերածության միջցին մենք ամենքս աղքատացել ենք:

Ցարի ժամանակ բոլոր հարկերը ծանրացել եյին աշխատավորների ուսերին: Յեվ ցարական կառավարությունը չեր մտածում, թե ո՞վ ե նրանցից ավելի աղքատը, կամ ավելի հարուստը, ուստի բոլորին ել խոզում եր մի՛ մլրատով, միակերպ:

Իսկ Խորհրդային իշխանության ժամանակ այդ գործը այլ կերպ ե դրված. ավելի հարկ գանձվում ե նրանից, ով ավելի յեկամուտ ունի. ավելի պակաս

հարկ գանձվում ե նրանից, ով ունի միայն միջին աշխատավորական յեկամուտ: Ով ավելի հեշտությամբ ե դրամ վաստակում, նա ել պետք ե ավելի դրամ տա Բանվորա-Գյուղացիական պետության կարդիների համար: Այդ որենքի հիման վրա յեն կազմված հարկի ժամին յեղած խորհրդային բոլոր որենքները: Այս բոլոր որենքներում անց ե կացվուազգաբնակությունն ըստ կարողության բաժանելու մկաբունքը, յեվ միշտ ել արտոնություններ կան ամենաաղքատների համար:

Ցարի ժամանակ հարկերը ծախսվում եյին նրապալատի քմահաճույքների վրա, անպետք պատերազմներ մղելու վրա, արտասահմանյան փոխառությունները ծածկելու համար և այն:

Իսկ Խորհրդային իշխանության հարկերը գանձվում են յերկրի տնտեսական կյանքը յեվ առնասարակ ժողովրդական տնտեսությունը վերա՛անդինելու, կարգի օգելու համար: Այդ բանը պիտի հասկանաամեն մի գիտակից մարդ:

Յեթե լավ մտածենք Խորհրդային իշխանության առաջադրած խնդիրների մասին, վորոնց նպատակն ե բարորություն ստեղծել աշխատավորների համար, — բոլորովին հասկանալի կըդառնա, թե պրոլետարական պետության մեջ աշխատավորների շահերը նույնն են, ինչ վոր համապետ ուկան շահերը: Պարզ կլինի, վոր այժմ չկա— «մերը» և «ձերը», ինչպես դա կար ցարական թուսաստանում, այլ կա մի՛ ընդհանուր բան — աշխատավորական շահ, վորը կազմում ե մեր գժվարին աշխատանքի ամբողջ իմաստը:

Այդ պատճառով, յուրաքանչյուր ազնիվ քաղաքացի

պետք է հասկանա, վոր հարկեր վճարելն անհրաժեշտ է բանվորա-գյուղացիական պետության գոյության ու զարգացման համար:

Հարկ վճարելոց, այսինքն՝ իր քաղաքացիական պարտը կատարելուց, իտաափող ամեն մարդ հանցանք և գործում ամբողջ ժողովրդի դիմաց։ Հարկ չվճարելու դեպքում նա ովտում է Խորքրդային Միության թշնամիներին յեվ զիտակցաբար չի կամենս մ ամրացնել պրոլետարական պետությունը։

Հարկ վճարելը — Խորհրդային պետության յուրաքանչյուր քաղաքացու պարտքն ե:

Ե՞նչպէս են գանձվում հարկերը

Հարկերը գանձելու դործում ել Խորհրդային իշխանությունն ընդառաջում է աշխատավորներին:

Այժմ արդեն կարելի յե ասել, վոր մեզանում հարկադրումը (հարկի տակ գնելը) աչքի յե ընկնում իրմիանդամայն ճշտությամբ։ Հարկատուն ճիշտ և վաղորոք գիտե իր հարկային պարտականությունների մասին։ Կա առաջուց կարող և պատրաստվել՝ վճարելու իր հարկը և խուսափել տույժից, առևգանքներից ու բռնագանձումը կատարող պաշտոնյանների հետ անհաճողներից։

Հարկը վճարելու ժամկետերը, հնարավորության չափով, հարմարեցրած են հարկատունիրի իրենց յեկամուաներն ստանալու ժամանակի հետ, յեկ վճարումն իրար բառ ինքան առաջ չի բերում մեծ գլխացավանք:

Որինակի համար վերցնենք գյուղացուն։ Ներկայումս  
դյուղացուց գանձում է միայն պիտական մի հարկ —

միասնական գյուղաբրկ, վարի վճարման ժամկետերը  
հարմարեցրած են աշխանը և նոր տարու սկզբին: Եշ-  
նանը հողագործ գյուղացին հավաքում ե իր բերքը և  
հնարավորություն ունի, հացահատիկը ծախելով, վճա-  
րել հարկը, իսկ նոր տարուց հետո այն գյուղացիները,  
փորսնք զբաղվում են արհեստներով դրսում (ոտար տե-  
ղում), աշխատանքից վերապատճում են տուն, հետները  
բերելով իրենց վաստակած դրամը: Թէ այս, և թէ այն  
գեպքում ժամկետերը հարմարեցրած են այնպիսի ժա-  
մանակամիջոցի, յերբ գյուղացին միջոցներ ունի՝ վճա-  
րելու իր հարկը:

Բացի այդ, Խորհրդային իշխանությունը թույլ է տալս մի այնպիսի թեթևություն, վորպիսին և հարկի վճարումը գյուղացիական փոխառության պարտասումներով։ Յուրաքանչյուր գյուղացի հարկատու՝ կարող է կամաց-կամաց ծեռք բերել եժան, մինչեւ անզամ նաև զեղչով, պարտասում, յակ դրանցով վնարել իր հարկը, վորով նա կշահի մինչեւ  $15\%$ .

Այսպես վոր հարկը վճարելու ձամկետերի ու կարգի վերաբերմամբ բողոքելու հիմք չկա: Այժմ զրությունը այն չե, ինչպես եր յերկու տարի առաջ, յերբ վյուղացիներից շատ հարկեր ելիս վերցնում, և վերցնում յերբ տարրեր ժամանակամիջոցներում ու տարրեր հարկանաների ձևորով, ինչպես որինակ՝ ֆինանսականը (գանձում եր համարազաքացիական հարկերը), պարենսավորմանը՝ (պարենսուրբը), աշխադղոմի հարկանը՝ աշխատահարկը և այլն:

Այն ժամանակի խոհապես վոր գյուղացւ բնիքած  
վար եր. գեռ մի հարկ չվճարած վրա, յը գալլանիր-  
րորդը, և այդպես անմերժ



Այժմ գործը կարգի յե ձգած: Յեթև վոր և ե գյուղական վայրում տեղի յեն ունենում անձտություններ՝ ժամկետերը սահմանելու նկատմամբ, այդպիսի դեպքերի մասին պետք ե լուր տալ իշխանության բարձրագույն ներկայացուցիչներին, և հանցավորները կսահնան իրենց արժանի պատիժը: Խորհրդային իշխանությունը չի սիրում հանաք անել այնպիսի պաշտօնյաների հատ, վորոնք խախում են գոյություն ունեցող որենքներն ու կարգերը: Այդ բանն ապացուցող որբնակները շատ կան:

Սակայն, չնայելով այս ամենին, քիչ չեն այն քաղաքացիները, վորոնք ամենեին չեն ուզում բանի տեղ դնել հարկեր վճարելու ժամկետերը:

### Հարկապարտ յեվ հարկապարտապաններ

Ցարական վարչակարգից մեզ մնացած ծանր ժառանգություններից մեկն ել այն ե, վոր հարկատուները չունեն քաղաքացիական պարտքի և հարկային դիսցիպլինայի գիտակցություն: Շատ շատերն ամեն կերպ աշխատում են խույս տալ, պրծնել հարկեր վճարելուց կամ վճարումը ձգձգել՝ դիմելով ամեն տեսակ միջոցների:

Հարկային գործավորները ներկայումս բավական լավ ուսումնաբերել են այս միջոցները, վորոնց դիմում են հարկ չվճարողները: Այդ բանը բացադրվում է կամ հարկատուների թույլ գիտակցությամբ, կամ իրենց քաղաքացիական պարտականությունները պարզ հասկանալու մտքի և դրանք կատարելու անհրաժեշտության բացակայությամբ, և կամ դեպի վերանորոգվող ժողվրդական անտունությունն ունեցած նըտանց անտարեր վերաբեր-

մունքով: Դրանցից յուրաքանչյուրը՝ կարծես թե ասում են. «Առանց ինձ ել յոլա կերթան», կամ՝ «Ի՞նչ գործ ունիմ յես ժողովրդական անտեսության հետ, — իմս ինձ համար ավելի կարեղ ե»: Այդ բանը բացադրվում է նաև գրանի հաշվով. «չեմ վճարի, գուցե անց կենա, — ու շահվեմ, փողը մնա գրապանումս»:

Այնքան ել վաղուց չե, յերբ այդպիսի հարկ չվճարող մտածում եր, թե արժեքը կորցնող գրամի ժամանակ շահավետ և հարկերի վճարումը ձգձել, վորովնետք մինչև վճարելը՝ «ըրջանառության» մեջ յեղած գրամները նրան վորոշ շահ, ոգուտ կրերեն:

Սակայն այժմ, կայուն դրամը գործածության մեջ մտնելուց հետո, այդ տեսակ շահը պետք է կորցնի իր նշանակությունը հարկ չվճարողի համար: Այժմ հարկերը հաշվում ու գանձում են կայուն դրույքներով (վոսկե ոռւրլիներով): Նախկին խորհրդային դրամանիշը «կյանքը քեզ բաշխեց», ուստի ժամանակին իր հարկը չվճարող հարկատուից բռնագանձվելիք տույժը նույնպես գանձում են կայուն ոռւրլով:

Թվում եր, թե հարկ չվճարողը այնքան սրամտություն կունենա, վոր զլիսի կընկնի, թե հարկի վճարման ձգձգելը իրեն բոլորովին ձեռնատու չե և սաստիկ վկաս և իր գրանին: Սակայն չնայած դրան, հարկի վճարումը կատարվում է բավական անկանոն:

Տեղեկությունների համաձայն, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ամբողջ Միության մեջ պետական հարկապարտքը մինչև 1924 թվի ապրիլի 1-ը հասնում է 51 միլիոն ոռւրլու:

Միամական գյուղատնտեսական հարկապարտքը,

հաշված հաճարի միավորով, կազմում և մոտավորապես 20 միլիոն փութ:

Այդ նշանակում ե, վոր խորհրդային պետությունը՝ ախապես հաշված իր յեկամուտները պակաս ե գանձեն վերել հիշված գումարի չափով: Հարկերի այդպես պակաս գանձումը պետք ե առիթ տար կրծտելու՝ կամ սաստիկ կարեոր ծախսեր և կամ բաց թղղնելու նոր թղթադրամեր:

Իով ինչՃվ բացադրել հարկապարտի այդ յերեսոյթը:

Առանձնապես չեն սիրում հարկ վճարել և ձգտում են նրանից իրուսափել ու գործ դնել ամեն տեսակի խորամանկություններ՝ հարկից աղատվելու ցանկությամբ՝ գյուղի և քաղաքի հարուստները:

Մկնենք գյուղից:

Հողագործությամբ պարապող և շատ քանակությամբ հողեր ցանող գյուղի հարուստներին այնքան ել դյուր չեկավ միամական գյուղնարկը, վորը վճարելու վոչ մի արամագրություն չունին նրանք: Այստեղից պարզ է, թե մարդ վորքան հարուստ ե, այնքան ել ավելի վատ և չարանենգ են Բանվորա-գյուղացիական իշխանությանը խարելու՝ նրա ձգտումները:

Այդ քաղաքացիները գործ են դնում ամեն տեսակ խորամանկություն, վորպեսզի հարկի վճարումը ձգձգեն մինչև այն ժամանակ, յերբ կվերջանա հարկանափաքի տափնապը, և այդպիսով գուցե մոռացվի նաև հարկը: Հարկ չվճարողներից ամենաչարանենպը դրանք են:

Նրանք առաջ ել նույն բանն եյն անում, յերբ շատ հարկեր կային: Նրանցից շատերի վրա մինչև հիմա ել մնացել են ընդհանուր քաղաքացիական, կոռ ու բեկարի և այլն հարկապարտքեր:

Բանն այն է, վոր անցյալների հարկային կարգի անկատարելիության շնորհիվ, չվճարողներից շատերը հաճախ մնում ելին անպատճեմ, վորով նրանց մեջ առաջ եր գալիս անպատճախանտվության զգացում դեպի իրենց քաղաքացիական պարտականությունները:

Բայց այժմ նրանք կսխալվեն իրենց այդպիսի հաշիվներում և վոչ մի խորամանկություն նրանց այլևս չի ողնի: Այժմ հարկային գործավորները խիստ կերպով հսկում, պաշտպանում են պետական շահները:

Բայց այն, վոր հարուստները իրենք չեն վճարում իրենց հարկերը, նրանք դեռ ուրիշներին ել զրդում են չվճարելու: Ճիշտ է, այդ բանը նրանց միշտ չե հաջող-գում, բայց և այնպես, լինում են դեպքեր, յերբ նրանք վորոշ մարդկանց խելքից հանում են:

Խորհրդային իշխանությունը չվճարողների այդ խմբակի հետ նազ ու տուզ անել չի սիրում:

Հարկապարտապանների շարքերում կան նաև այսպիսիները, վորոնց չվճարած հարկը կազմում է չնչին տոկոս: Բայց յերբ շատանում ե այդպիսիների թիվը, այն ժամանակ այդ չնչին տոկոսները կազմում են հսկայական գումար: Հարկի այդ տեսակ լրիվ չվճարելը բացատրվում ե նրանով, վոր հարկատունները կամ ցանկություն չունին վճարելու և կամ չեն կարողանում վճարել վորեւ պատահական հանգամանքների պատճառով (անասունների հիվանդանալու, սատկելու հետևանքով և այլն), վոր առաջ են բերում նրա համար անըսպասելի ծախսեր:

Ենդհանուր առմամբ, մեծ չե այդպիսի հարկապարտապանների թիվը:

Կա հարկապարտականների մի յերրորդ խմբակ, —

վոր ամենաչշինն է: Այդ խմբակը կազմում էն այն գյուղացի տնտեսությունները, վորոնք իսկապես ուղում են վճարել, բայց միջոց չունին վճարելու: Նրանց մի մասը աշքաթող և արել հարկը պակսեցնելու համար ժամանակին միջնորդյություն հարուցել, իսկ մյուս մասը հարկը պակսեցնելու կամ նրանից ազատվելու համար չե կարողացել անհրաժեշտ ապացույցներ ներկայցնել:

Այդպիսի հարկապարտապաններին ընդառաջ են գնում միշտ հարկալին գործափորները: Նրանք ոգտվում են արտոնություններով և աջակցությամբ:

Կարելի յե զատել և մի այլ խմբակ — զա այսպես կոչված «մարտղ մտածներն են»: Նրանք չեն շտապում հարկը մուծելու և ամեն կերպ քաշքում են վճարումը, վորի համար դիմումներ են տալիս, միջնորդյություններ են մատուցում և այլն: Նրանք սպասում են, թե կարող են լինել նաև զեղչումներ: Բանն այն է, վոր մի քանի վայրերում, չարանենք մարդիկ լուրեր են տարածում թե չպետք շտապել հարկը վճարելու, վորովհետև պիտի տեղի ունենան զեղչումներ և «ներումներ»: Ի միջի այլոց, այդպիսի լուրեր սաստիկ տարածում եյին վլադիմիր իլիչ Լենինի մահից հետո: Յեվ տեղ տեղ մարդիք հավատացին այդ լուրերին, քրալազի մեջ քցելով իրենց գլուխը, նրանք ստիպված յեղան հարկը վճարել տույժի հետ միասին:

Այդ «մարտղ մտածների» խմբակը իսկապես պետք եղասել չարանենքների կարգին, վորոնց նկատմամբ և պետք և լինել շատ խիստ:

Բայց գյուղում հարկապարտքը դոյանալու և աճելու մեջ յերեմն միայն հարկատունները չե, վոր մեղա-

վոր են, այդ բանում մեղավոր են նաև մեր գավառական ու գյուղական գործափորները:

Նրանք գյուղացուն միշտ հասկանալի ձևով չեն բացատրում այս կամ այն հարկի նշանակությունը, իսկ յերեմն ել բոլորովին սխալ են բացատրում: Կամ բոլորովին անփույթ են վերաբերվում իրենց գործին, այսինքն՝ լավ չեն ստուգում հարկատունների ցուցակը, չեն հետևում այն բանին, վոր վճարումները իր ժամանակին կատարվեն և միջոցներ ձեռք չեն առնում հարկերը գանձելու:

Մեղքը թագնելու կարիք չկա — լինում ենաև ինաւմլումյուն: Բարեկամաբար թեթևացնում են հարկերը:

Դժբախտաբար, բոլոր այդորինակ դեպքերի մասին լուր չի հասնում գավառի կամ նահանգի իշխանության ներկայացուցիչներին:

Այն ինչ, զա անգրաժեշտ է: Զի կարելի թույլ տալ անձտապահություն և անտեղի ներողամտություն: Բոլորն որենքի առաջ պետք ե հավասար լինեն:

Յեվ յուրաքանչյուր ազնիվ քաղաքացի պարտավոր ե հայտարարելու, ուր հարկն ե, Խորհրդային գործափորների բոլոր ապօրինի կամ անձիշտ գործողությունների մասին: Այդ կարեսը և այն բանի համար, վոր հետագյում այլ ևս չկրկնվեն նման յերեւյթներ:

Այժմ ահա մենք տեսնում ենք, թե ինչով կարելի յե բացատրել հարկապարտքը՝ մի քանիսները բոլորովին չեն ուղում վճարել իրենց հարկը, մյուսները վճարել են միայն մի մասը և կարծում են, թե ներիք ե, վոմանք ամեն կերպ ձգձգում են վճարումը, իսկ կան մարդիկ ել վոր չեն կարողանում վճարել, վորովհետև մի-

ջոցներ չունեն: Յեվ այդ բոլոր պատճառներով հարկաւ-  
պարտքը գյուղում աճում, հա աճում ե:

Իսկ քաղաքի հարկապարտքի աճումը, բացի այդ  
պատճառներից բացատրվում ե և ուրիշներով, վորոնց  
թիվը, ընդհանուր առմամբ, շատ մեծ ե:

Դրանցից ամենահիմնականն այն ե, վոր հարկա-  
տուներին չեն գտնում. նրանք դիտավորյալ կերպով  
խուռափում են հարկերը տալուց, զանազան առարկու-  
թյուններ և փաստաթղթեր մեջ քցելով, կամ տեղա-  
փոխվելով մի քաղաքի մեկ փողոցից մի ուրիշը և առ-  
հասարակ, ինչպես հարկապարտապաններից մի քանիսը,  
թափառաշրջիկ կյանք վարելով: Ընդհանրացած յերե-  
փոյթ ե. վոր այս կամ այն քաղաքացին լավ իմա-  
նալով ժամկետին հարկի վճարման անհրաժեշտության  
մասին, դիտավորյալ կերպով թաքնվում ե: Իսկ յերբ  
հարկային գործափորները ստիպողական միջոցներով  
ստիպում են նրան հարկը վճարելու, այն ժամանակ  
նա աշխատում է արգարանալ նրանով, թե չի իմա-  
նում որենքները, կարգադրությունները և այն:

Ի հարկե, թաքնվելու այդորինակ դեպքերը հարկա-  
պարտապանին ննարավորություն չեն տալիս վերջնա-  
կանապես ազատվելու իր հարկից: Դա միայն ուշացնում  
է նրան գտնելու որը և հարկի վճարումը. բայց դրա  
փոխարեն նրա վերաբերմամբ գործադրվող ստիպողա-  
կան միջոցները լինում են ավելի խիստ:

### Հարկեր յեվ տույժեր

Ժամկետին չվճարված հարկի գումարին ավելանում  
ե նաև տույժը, վոր խիստ զգալի կերպով անդրադառ-  
նում և անձշտապահ հարկատուների գրպանի վրա,

Շատ հաճախ ե պատահում, յերբ լսում ենք նրանց  
խոսակցությունը — թի հարկերը ինքն ըստ ինքյան  
վոչինչ են, զուլում բան են տույժերը, վորոնք ուղղակի  
դատարկում են մարդու գրպանը: Տույժերը ուղղակի  
պատուհաս են:

Դրա հետ միասին, սովորաբար ավելացնում են,  
թե խորհրդային իշխանությունը տույժերի վերաբեր-  
մամբ շատ անսողորմ ե — շատ մեծ են այդ տույժերը.  
և վոր չափազանց լավ կլիներ, յեթե վոչ մի ժամկետ  
և տույժ չլիներ, այլ յուրաքանչյուր հարկատու մուծեր  
դրամը՝ յերբ ուղենար և վորքան ուղենար, համաձայն  
իր տնտեսական հաշիվների:

Ի հարկե, հարկատուի համար շատ լավ բան ե այդ  
անտեսական հաշիվը: Դրա մասին խորհրդային իշխա-  
նությունը ինքն ել և մտածել, մացնելով միասնական  
գյուղհարկը, վորը թեթևացնում ե գյուղացու հարկա-  
յին ծանրությունները:

Բայց պետք ե ի նկատի ունենալ և այն բանը, վոր  
պետությունն ել ունի իր տնտեսական հաշիվը, յերբ  
հարկ ե գնում քաղաքացիների վրա:

Պետությունը հաշիվ առնելով իր կարիքները, յեն-  
թաղբում ե մինչև վորոշյալ ժամկետը հարկերից հավա-  
քել մի գումար, վորով կծածկի իր ծախսերը: Բայց  
հարկի վճարման ձգձգելու պատճառով, հավաքած գու-  
մանին ել չեն բավականացնում, և պետությունը,  
ինչպես գիտենք, հաճախ ստիպված ե լինում տպագրե-  
լու նոր թղթագրամներ:

Իսկ այժմ մինչև իսկ փոքրիկ յերեխաները գիտեն,  
թե ինչ արժեք ունեն այդ թղթագրամները:

Եթան թղթագրամները ձեռնոտու չեն հարկատուին,

Նրանք ձեռնտու չեն նաև պետությանը: Իսկ ձշտապահ հարկատուները սրտնեղում են, թե վոմանք հարկերը չեն վճարում, այն ինչ՝ իրենք արդեն հարկը վճարել են իր ժամանակին:

Այդ պատճառով ել պետությունը անձշտապահ հարկատուների վրա տույժ ե դնում, վորպեսզի դա սովորույթ չդառնա և ուրիշների համար վատ որինակ չըլինի: Սակայն միշտ չեն ոգնում այդ տույժերն ու տուգանքները — յերեխն հարկավոր ե լինում գործադրել ավելի ևս խիստ միջոցներ:

Ի՞նչ ե սպասում համառորեն հարկը չվճարող-ներին

Զարանենք և համառորեն չվճարողների հետ նազ անելու կարիք չկա: Ուրիշ բան, յեթե նրանք աղքատ լինեին և վճարելու համար չունենային, թե չե՛ մեծ մասամբ նրանք ունեորներ, նույնիսկ հարուստներ են, իսկ աղքատ հարկապարտապաններին որենքը տալիս ե արտոնություններ:

Հարկային մարմինները հարկապարտապանության դեմ պարարելու համար ունեն մի շարք միջոցներ, որինակ՝ 1) կարող են վեր գրել և կալանքի յենթարկել հարկապարտապանին պատկանող գույքը, 2) այդ գույքը կարող են վաճառել աճուրդի միջոցով, 3) կարող են քրեական դատի յենթարկել, չարանինք կերպով հարկը չվճարելու համար, և 4) կարող են բանտարկել հարկապարտապանին:

Ի լրումն այդ բոլորի, վճարողների նկատմամբ կիրակվող ներդրման այդպիսի միջոցների բոլոր դեպ-

քերի մասին՝ տեղեկացնում են բոլորին: Այդ կտտարվում ե պատասխանատվության յենթարկվածների ազգանունները լրագրում տպագրելով, կամ թե չե բազմամարդ տեղերում, դրա մասին հայտարարություններ կոցներով:

Այդ ձեռվ ամեն վոք՝ թե քաղաքում, թե գյուղում կարող ե իմանալ, վոր այս ինչը իր հարկը չի վճարել և դրա համար դատի յի յենթարկվել: Չենք կարծում, վոր այդպիսի «փառքը» կարող ե հաճելի լիսել հարկ չվճարողին: Նա ուշքի կզա, բայց արգեն ուշ կլինի: Իսկ դրա փոխարեն, յեկող տարի նա այլ ևս առիթ չի տար, վոր հարկապարտը գոյանա, այլ ամենից շուտ ինքը կվճարի իրենից ստանալիք հարկի գումարը:

Փորձը ցույց է տվել, վոր բոնագանձման այլ միջոցները տալիս են ամենալավ հետեւաքները:

Հարկ չվճարողը շարունակ գանգատվում է, թե հարկը վճարելու դրամ չունի. իսկ հենց վոր բանը համառում է նրա կայքը վեր գրելուն ու վաճառելուն — մեկ ել տեսնես, դրամ ճարեց, և աճուրդը այլ ևս չի կայանում:

Այդպիսի որինակներ՝ վորքան կուզեք:

Բայց պատահում են և այնպիսի չարանենք չվճարողներ, վորոնց պետք ե դատի յենթարկել: Այդպիսի միջոցներ գործադրվում են այն չվճարողների վերաբերմամբ, վորոնք նախկին տարիներումն նույնպես անկանոն են վճարել իրենց հարկերը:

Եթենք այստեղ Քրեական Որինագրքի այն հոգվածների բովանդակությունը. վորոնք հարկերը չվճարելու համար սահմանում են պատիժներ:

Հոդվ. 78. Դրամական հարկը կամ բնատուրքը

վճարելուց և պարհակը կամ կտո ու բեգաւը կատարելուց մասսայորեն հրաժարվելու համար՝ պատըժվում էն՝

1) Դրդիչները, ղեկավարները և կազմակերպիչները — յենթարկվում են ազատազրկման՝ մի տարուց վոչ պակաս ժամանակով, ըստ այսմ, զրավվում և նրանց ամբողջ գույքը կամ դրա մի մասը.

2) Մնացած բոլոր մեղսակիցները — յենթարկվում են ազատազրկման 6 ամսից վոչ պակաս ժամանակով, կամ գույքի բռնազանձման՝ այն չափով, վորը պակաս չե այդ վճարումների ու պարհակների կրկնակի քանակից:

Հոդվ. 79. Առանձին քաղաքացիները ժամկետին հարկ չվճարելու համար, կամ դրամական հարկը ու բնատուրքը վճարելուց և կամ համապետական նշանակություն ունեցող աշխատանքներ կատարելուց հրաժարվելու պատճառով յենթարկվում են՝

Առաջին անգամ համապատասխան մարմինների վարչական պատիմակներին՝ այն չափով, վորը սահմանված ե որենքով:

Կրկնակի և համառորեն չվճարումն, կամ աշխատանքների ու պարհակի կատարումից հրաժարվելը և կամ նրանց այլ գործողությունները, վորոնք հաստատում են չվճարողների չարանենքությունը, յոնթարկվում են՝

ազատազրկման կամ պարտադիր աշխատանքների՝ 6 ամսից վոչ պակաս ժամանակով, կամ ամբողջ գույքի, և կամ նրա մի մասի բռնազրավման, և կամ ել՝ գույքի բռնազանձման, վոչ պակաս՝ քան նույն այդ վճարումների և պարհակների կրկնակի չափը:

Հոդվ. 80. Փոխադարձ համաձայնությամբ կազմակերպված թաքուցումները, կամ հարկադրվելիք և նաշ-

վառման յենթակա առարկաների ու մթերքների քանակների, նույնպես և ցանքսերի, մարգագետինների, բանջարանոցների և անտուռային տարածությունների չափի, կամ անասունների քանակի սխալ ցուցմունքները. բացարձակ վատ հատկություն ունեցող իրերի կազմակերպված մուծումն, քաղաքացիների վրա որենքով դրված աշխատանքների ու անհատական պարհակների փոխադարձ համաձայնությամբ չկատարելու համար, դրդիչները, ղեկավարները և կազմակերպողները յենթարկվում են՝

ազատազրկման մի տարուց վոչ պակաս ժամանակով միենույն ժամանակ բռնազրավում և նրանց ամրությունը կամ նրա մի մասը. ազատազրկմանը կարող ե լինել նաև առանց գույքի բռնազրավման. մնացած մեղսակիցները յենթարկվում են՝

ազատազրկման 6 ամսից վոչ պակաս ժամանակով կամ գույքային և պարհակային բռնազանձման, բայց վոչ պակաս, քան այդ վճարումների ու պարհակների կրկնակի քանակը. նույն այդ արարքների համար, վրոնք սակայն կատարվում են առանց փոխադարձ համաձայնության, հանցավորները յենթարկվում են (Քր. որենսգրքի) հոդվ. 79-ում նախատեսված պատիմակներին:

Պատիմակներ են սահմանված նաև վերևում հիշատակված հանցավորներությունները կատարելու դրդիչների համար (Քր. որենսգր. հոդվ. 83):

Խորհրդային իշխանությունը այդպիսի ստիպողական խիստ միջոցների յե փեմում՝ հարկադրված անհրաժեշտությունից: Նրան բոլորովին հաճելի չեղատել ու պատժելիք քաղաքացիներին յեվ խլել նրանց գույքը. բայց ի՞նչ արած:

Դա անհրաժեշտ է: Այդպես և պահանջում ժո-

ղովրդական տնտեսության վերականգնման գործը: Այդ գործը, այսպես ասած, ուզմական ե, հիտելապես ուզմական են յեվ նրա միջոցները: Ինչպես արդեն ասացինք, հարկի չարանենք չփառողները ժողովրդական տնտեսության վերականգնման գործի թշնամիներն են: Այդ պատճառով նրանց նկատմամբ գործադրվում են ամենախիստ միջոցները:

Հարկ չփառելը խառնում ե Խորհրդային պետության տնտեսական հաշիվները և նրա համար ավելորդ աշխատանք ե ստեղծում:

Հարկային գործավորները կոչված են բարելավելու Խորհրդային պետության դրամական վիճակը և դրա հետ միասին աջակցելու ամբողջ ժողովրդական տնտեսության վերականգնմանը: Այն ինչ, դրա փոխարեն, նրանք ստիպված են լինում իրենց ուժերն ու ժամանակը վասնելու հարկապարտը հավաքելու նպատակով ուժեղ գործունեյություն կազմակերպելու վրա, անհանգիստ անելու գավառորդկոմներին և գյուղխորհուրդներին, աճուրդով վաճառելու ջանջալ հարկատուների գույքը, դատի տալու նրանց և այն:

Ավելի լավ և ավելի հեշտ չե՞ր լինի արդյոք, յեթե բոլոր հարկատուները սահմանած ժամկետներին կատարեին մուծունենք և բանը չհասցնելին մինչեւ գույքի վաճառումը, կամ մինչեւ գալաք և կամ տույժը, վորը յերբեմն շատ ավելի ծանր և լինում, քան իրենք՝ հարկերը:

Ընկերներ, մտածեցեք այս հարցերի մասին յեվ դուք կտեսնեք, վոր հարկի իր ժամանակին վճարելը շատ ավելի հեշտ ե յեվ շատ ավելի արժան ե նատում թե պետությանը յեվ թե իրեն հարկատուին:

Յեթե հարկավոր և հարկ վճարել, ուրիշն, զբանից

փախչել, աղատվել չես կարող: Շուտ թե ուշ, բայց պետք ե վճարես — գուցե և տույժի հետ միասին:

Ամենից լավն այն ե, վոր վճարես կամ ովին, — ուաթե ավելի ծեռնոտու յեվ թե հանգիստ: Վոչ վոր բեզ չի վրդովի յեվ վոր վոր բեզ չի նեղացնի: Պետությունը բեզանից գոհ ե, գոհ ես նաեւ դու ինքո, վորովինետեվ բարեխղճորեն կատարեցիր քո քաղաքացիական պարտը — մուծելով քո լրաւան ժողովրդական ամ բողջ տնտեսության վերականգման ընդհանուր գործի մեջ:

Մի, թողնեմ, վոր հարկապարտք գոյանա

Հարկերը մուծեք ժամանակին: Հարկը անհրաժեշտ է ժողովրդական տնտեսությունը ամրապնդելու համար: Այս խոսքերը պետք է անգիր իմանան բոլոր հարկատուները:

Յեթե նրանք չմոռանան այդ խոսքերը և ըմբռնեն այդ ինն պարզ ու հասկանալի բառերը, այն ժամանակ հարկապարտք չի լինիւ: Այդ ճշմարիտ ե, ինչպես ճշմարիտ ե և այն, վոր հարկից վոչ վոք խոսափել չի կարող:

Հարկերին յենթակվելը, ուրիշ խոսքով հարկային դիսցիպլինան, միակերպ պետք ե տեղ բռնի ինչպես հարկապարտապանի, նույնպես յեվ հարկային գործավորի սրտու: Հարկապարտապանին այդ դիսցիպլինան անհրաժեշտ ե նրա համար, վոր նա վնաս չհասցնի թե՛ զանձարանին, յեվ թե՛ իրեն — զոր հույս չդնելով այն բանի վրա, թե նրան չի համար ստիպողական գանձման հերթը. իսկ հարկային գործավորին

դաս անհրաժեշտ ե նրա ճամար, վոր նաև իրեն չհուսալիի, թե ճարկերը իրենց իրենց կզան, կլցվեն պետության գանձարանը:

Նրկայումս, յերբ Խորհրդային պետությունը ստեղծում է դրամական ուժեղ սխոտեմ — նաև ավելի ևս միծ կարիք ունի դրամի: Պետությունը աշխատում է սահմանել ճարկադրման ավելի ուղիղ և կատարելագործված ձև:

Խորհրդային իշխանությունը այսպիսի պայմաններում ավելի յեզր իրավունք ունի պատժելու թե ճամանորին ճարկից խուսափողներին, յեզր թե, ճարկային անհոգ գործավորներին:

Իսկ ինչ վերաբերում է այն ճարկապարտաններին, վորոնք ճարկապարտքի տակ են ընկել չնորհիվ իրենց անդիտակցության կամ անփութության — նրանք պետք ե ճասկանան, վոր ժամանակին ճարկը չգնարելու պատճառով խոշոր վնաս են ճասցնում թե իրենց, և թե պետությանը:

Նրանք պետք ե իրենց ստիպեն իրենց պարտականություններում ճառապահ լինել և ճավասարվեն նրանց, ովքեր բոլոր ճարկերը վճարում են նշանակված ժամանակին:

Իսկ առհասարակ, թե՛ ճարկապարտապաններին, յեզր թե ճարկային գործավորներին պետք ե ասել — «մի՛ թողներ, վոր ճարկապարտք գոյանա»:

Ճարկապարտքը վճարելու վերաբերյալ արտօնություններ

Ուրիշ բան ե, յերբ խոսքը վերաբերում է թույլ և չքավոր տնտեսություններին: Չե, վոր գյուղում քիչ չեն այն տնտեսությունները, վորոնք ցանկանում են վճարել ճարկ, բայց չեն կարողանում: Այդ այն չքավոր տնտեսություններն են, վորոնք քիչ ե մնում, վոր սովաման լինեն: Խորհրդային իշխանությունը այդպիսի տնտեսություններին միշտ ընդպատճ և գնում:

Այդպես, Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը վորոշել է մինչև 1924 թվի մայիսի 10 չգանձած 1923/24 թվի գյուղնարկի պակասը ճամարել ճարկապարտք: Այդ վորոշումը միծ արտօնություններ ե տալիս ճարկը ճետաձեկու և այն զիջելու վերաբերյալ:

Այդ ամբողջ աշխատանքը պետք ե կատարեն ճարկային Հանձնաժողովները:

Գյուղացիական բոլոր տնտեսությունները, վորոնք ճարկապարտք ունեն, ճաշվառման են յենթարկվում և բաժանվում են յերեք խմբակների:

Առաջին խմբակի մեջ են մտնում գյուղացիական այն տնտեսությունները, վորոնք ճարկապարտքը վճարել չեն կարող: Ենտեսապես, ել կարիք չկա այդ պարտքը թողնելու նրանց վրա: Ճարկային Հանձնաժողովներին իրավունք ե վերապահված ազտուել նրանց այդ ճարկապարտքից:

Յերկրորդ խմբակը, վոր թվով ամենաշատն ե, կազմում են այն գյուղացի ական տնտեսությունները, վորոնց վրա պարտք ե մատել ճարկի չմուծված մասը, և

վորոնք այժմ, ժամանակավոր մի քանի դժվարությունների շնորհիվ, մինչև նոր բերքը, չեն կարող վճարել այդ հարկը, բայց հիմք կա սպասելու, թե մյուս բերքին այդ հարկապարտքը կարող կլինեն վճարելու՝ կամ լիովին և կամ նրա մի մասը:

Հարկային Հանձնաժողովները պետք են, առանց տույժի, այդպիսի հարկապարտապանների պարտքը գանձեն կամ լիովին, և կամ նրա մի մասը միայն, հետաձգելով մնացածը մինչև հարկային նոր կամպանյան:

Հարկային Հանձնաժողովները խիստ կհետեւն, թե ով ե արժանի այդ արտօնություններին և ով վճէ: Նրանց խափելը դժվար ե:

.....



Տիպ. Полиграфшкола, Ալ. Ակայ Չերետելի № 3.  
Գլավլիտ 46.

Տираж 2000.



ՀՀ Ազգային գրադարան



NL0205548

27722